

ԱՐԻՍԻՊ ՊԵՊԸ ԵՒ ԼԵՆԿԱՆ՝¹⁾

—Ի՞նչ ես լալիս—հարցրեց Լենկան ոտքի եղնելով այն միջոցին, երբ աղջիկը հասել էր նրա մօտ։

Նա սարսուռաց և կանգ առաւ, մէկ անդամից դադարելով լաց լինելուց, բայց այնպէս շարունակ լուռ հեկեկալով։ Մի քանի վայրկեան այդպէս նայելուց յետոյ նրա շրթունքները դողդողացին, դէմքը ծիծաղելի կերպով կնճռոտուեց, կուրծքը երերաց և նորից բարձր ձայնով հեկեկալով առաջ գնաց։

Լենկան զգում էր, որ իւր ներսում մի բան սեղմւում է և յանկարծ հետևեց աղջկան։

—Լաց մի լինիր։ Արդէն մեծ աղջիկ ես... ամօթ է, գուցէ... դեռ ես նրան չհասած ասաց Լենկան և երբ հասաւ, նայեց նրա երեսին և նորից հարցրեց ուսերը թափ տալով։

—Հը, ինչո՞ւ էիր հեծկտում։

—Հա-ա... երկարացրեց աղջիկը։ Նթէ քեզ... և յոնկարծ փոռեց փոշու մէջ գետնի վրայ երեսը ձեռքով ծածկելով և յուսահատ լաց էր լինում։

—Իէ,—արհամարհանքով սկսեց Լենկան.—կնիկ... կատարեալ՝ կնիկ։ Թիւ, դու...

Բայց այդ չօգնեց ոչ աղջկան և ոչ նրան։

Տեսնելով թէ ինչպէս աղջկայ բարակ, վարդագոյն մատների միջով արտասուքները մէկը միւսի ետևից գլորւում էին, Լենկային վիշտը պաշարեց և նա կամեցաւ լաց լինել։ Նա թեքուեցաւ դէպի աղջիկը և զգուշօրէն ձեռքը բարձրացնելով թեթևակի դիպաւ նրա մազերին, բայց իւր համարձակութիւնից վախեցած իսկոյն յետ քաշեց ձեռքը։ Իսկ աղջիկը շարունակ լալիս էր ու չէր խօսում։

—Լսի՛ր,—կարճ լռութիւնից յետոյ սկսեց Լենկան, նրան օգնելու զօրեղ պահանջ զգալով։—Լսի՛ր... այդ ի՞նչ ես անում։ Թափել են, ինչ է... Կանցնի Էլի, Թէ ուրիշ բան է պատահել։

¹⁾ «Լումայ» 1903 № 2.

Ասա, աղջի, հա... ասա տեսնենք.— և կը թեթևանայ ցաւդ, Գուցէ մի բան ես կորցրել Միասին կը որոնէինք:

Աղջիկը ձեռքը երեսից յետ քաշելով տխուր ճօճեց և վերջապէս հեկեկալով ծանր ծանր պատասխանեց ուսերը վեր քաշելով:

— Աղլուխս... կորցրել եմ... Ախպէրս էր բազարից բերել... կապոյտ, ծաղկաւոր. ես գլխիս էի գցել... և կորցրի.— Եւ նորից լաց եղաւ աւելի ուժգին և աւելի բարձրաձայն հեկեկալով և հեծեծող ձայնով աղաղակելով— օ-օ-օ:

Լենկան անգոր զգաց իրեն նրան օգնելու և երկչոտութեամբ հեռու քաշուելով նրանից, մտախոհ և թախիծով նայում էր մթնած երկնքին: Այստեղ նա մի ծանրութիւն զգաց և շատ ցաւեց աղջկայ համար:

— Լաց մի լինիր... Գուցէ մի կերպ գտնուելու է... շնջաց նա կամացուկ, բայց նկատելով որ աղջիկը չի լսում նրա մխիթարանքը, աւելի ևս յետ քաշուեց և մտածում էր, որ աղջիկը անշուշտ տանը հօրից այդ կորուստի փոխարէնը մի լաւ կուտի... Եւ նոյն րոպէին նրան թուաց, որ հայրը, մի մեծ սև կազակ, ծեծում է նրան, իսկ նա արտասուքը կուլ տալով և երկիւղից ու ցաւից դուրդողալով թաւալւում է հօր ոտների տակ:

Նա վեր կացաւ, և առաջ անցաւ, իրեն ճնշուած և վիրաւորուած զգալով այդ աղջկան որ և է կերպով օգնելու անկարողութիւնից, բայց մի հինգ քայլ անելով կրկին շտապով յետ դարձաւ, կանգնեց նրա առաջ ցանկապատին բոլորովին կից և աշխատեց մի փաղաքշիչ ու լաւ բան յիշել: Ոչ մի փաղաքշիչ խօսք սակայն նրա միտքը չէր գալիս:

— Աղջի, գոնէ ճանապարհից դուրս գայիր: Բաւական չէ, ինչքան լաց եղար: Գնա տուն և ամեն բան պարզ ասա՝ այնպէս ինչպէս եղել է: Կորցրել եմ... Էլ ի՞նչ շատ...

Նա սկսեց խօսել ցածր, ցաւակից ձայնով և վերջացնելով վրդովուած բացականչութեամբ, ուրախացաւ, երբ տեսաւ որ աղջիկը վեր է կենում գետնից:

— Ա՛յ այդպէս... Ժպտալով և ոգևորուած շարունակեց նա.— Արի, հա: Ուզում ես հետդ գամ և բոլորը պատմեմ: Գոկողմը կը պահեմ, մի վախենար:

Եւ չորս կողմը աչք ածելով Լենկան հպարտօրէն ուսերը թօթուեց:

— Հարկաւոր չէ... չնչաց ծանր-ծանր շորերի փռին թափ տալով և շարունակ լուռ հեծեծալով:

— Թէ չէ՝ դամ—մեծ պատրաստակամութեամբ բարձրա՝ ձայն յայտարարեց Լենկան և գլխարկը ծռեց դէպի մի ականջի կողմը:

Այժմ նա դուռ տուած կանգնեց աղջկայ դիմաց. դրանից նրա ցնցոտիների ծնկները մի տեսակ արիւթեամբ վեր ցցուեցան. նա մահալով ծանր-ծանր բաղխում էր գետնին, յամառորէն սևեռած աչքերով այնտեղ նայելով. այդ աչքերը թախծալից փայլում էին հպարտ ու համարձակ զգացմունքով:

Աղջիկը ծուռ նայում էր նրան արտասուքը դէմքի վրայ արորելով, ապա կրկին հառաչելով ասաց.

— Հարկաւոր չէ, մի՛ գալ: Մարէն մուրացիկներին չէ սիրում:

Սև հեռացաւ մուրացիկից, երկու անգամ յետ-յետ նայելով: Թախծը պաշարեց Լենկային: Աննկատելի կերպով և դանդաղ շարժումներով նա փոխեց իւր վճռական դուռս կոշող գիւղը, նորից կծկուեցաւ, խաղաղուեց և պարկը չալալն առնելով, որը մինչև այդ ժամանակը ձեռքին էր, կանչեց աղջկայ ետևից, երբ սա աներևոյթանալու վրայ էր փողոցի անկիւնում.

— Մնաս բարև:

Աղջիկը քայլուածքը շարունակելով յետ նայեց դէպի նա և անյայտացաւ:

Մութն ու դալուկը աւելի և աւելի պաշարում էին չըրջակայքը: Սրեկոն մօտենում էր և օդում կանգնած առանձնակի, ծանր հոտը փոթորիկ էր նախագուշակում: Արեգակը արդէն իջել էր և սօսիների կտարները թեթև վարդագոյն էին ստացել: Բայց նրանց ճիւղերը ընդգրկած երեկոյեան ստուերներից այդ բարձր և անշարժ մարմինները աւելի թանձրացել ու բարձրացել էին և Լենկային թւում էր, թէ նրանք ընկղմուած են մտքերի մէջ և ինչ որ սոսկալի բանի են սպասում: Սրկինքն էլ մթնել էր նրանց գլխին, թաւիչ դարձել և կարծես ցած էր իջնում երկրի վրայ: Որտեղ որ հեռւում խօսում էին և մի այլ տեղ աւելի հեռւում մի այլ կողմում՝ երգում էին: Թւում էր, թէ այդ հնչիւնները, որոնք հանդարտ, բայց խիտ ու անընդհատ ալիքանում էին օդում, նոխալէս յագեցած են ծանրահոտութեամբ:

Լենկան աւելի ևս տխրեց, մինչև իսկ ինչ որ երկիւղ պա-

տեց նրան: Նա կամեցաւ դէպի պապը գնալ, նայեց շուրջը և առաջ գնաց ճանապարհն ի վեր: Ողորմութիւն հայցել բոլորովին չէր ցանկանում նա: Գնում էր և զգում, որ կուրծքը զարկում էր այնպէս արագ և որ առանձնապէս նա ծուլանում է շրջել և մտածել... իսկ աղջիկը նրա յիշողութիւնից դուրս չէր գալիս և նա մտածում էր՝ ինչ է անում արդեօք այս ընկերին այդ աղջիկը: Արդեօք տո՛ւն գնաց: Հարո՛ւստ է: Սթէ հարուստ ընտանիքից լինի՝ կը ծեծեն, բոլոր հարուստները ժլատ են. իսկ եթէ աղքատ է՝ Թերեւս չծեծեն: Աղքատ ընտանիքներում երեխաներին աւելի շատ են սիրում, որովհետեւ նրանց աշխատանքին են սպասում: Մաքերը՝ մէկը միւսից աւելի ձանձրալի՝ շարժում էին նրա գլխում և իւրաքանչիւր բռնակէ վշտի յոգնեցուցիչ և ճմլիչ զգացումը, ինչպէս նրա մտքերին ուղեկցող ստուեր, աւելի ծանրանում էր և աւելի ևս ընդգրկում նրան:

Երեկոյեան ստուերները աւելի խեղդիչ էին դառնում և խտանում: Լենկայի հանդէպ դուրս էին գալիս կապակներ և կազակուհիներ և առանց ուշադրութիւն դարձնելու անցնում էին, արդէն ընտելացած լինելով Ռուսաստանից եկած սովետականների հոսանքին: Նրա հանգած հայեացքը ծուլօրէն սահում էր նրանց կուշտ, խոշոր կերպարանքների վրայով: Նա արագ դիմում էր դէպի եկեղեցի, որի խաչը շողշողում էր նրա դիմաց: Ժառանգի կանաչի միջից:

Վերադարձող նախրի սուր աղմուկը նրան հասաւ: Ահա և եկեղեցին՝ ցածրիկ և լայնանիստ, հինգ ներկած գլուխներով: Շուրջը սօսիներ կան բուսած, որոնց կատարները անցել են խաչի բարձրութիւնից, ցօղուած վերջալոյսի ճառագայթներով և շողշողում են կանաչի միջից ինչպէս վարդագոյն ոսկի:

Ահա և պապը, որ կռացած պարկի ծանրութեան տակ դէպի գաւիթ է գիմում. նա նայում է չորս կողմը ձեռքի ափը ճակատին դէմ արած:

Պապի ետևից ծանր, անհաստատ ընթանում է գիւղապետի գլխարկը աչքերին վեր թողած և փայտը ձեռքին:

—Հը՛, պարկդ դատարկ է.—հարցրեց պապը Թուանը մօտենալով, որ կանգ առած սպասում էր նրան պատի տակ:

—Իսկ ես, հրէս տես...—և տնքտնքալով շալակից վեր բերեց մինչև բերանը պինդ լցրած քաթանէ քսակը:

—Օխ, այստեղ լաւ են ողորմութիւն տալիս, լաւ... Հը՛, ինչ է, յօնքերդ կիտել ես:

—Գլուխս ցաւում է...—կամացուկ արասանեց Լենկան՝ կռանալով և պապի կողքին տեղ բռնելով, որը մէջքով յենուել էր այնտեղ դարսած աղիւսներին և ազահ ու անբաւական արտայայտութեամբ ձեռքով շփում էր հաւաքած փշրանքները:

—Հը', յոգնել ես, նեղացել: Ահա շուտով կերթանք գիշերելու: Ինչպէս էր կոչւում այն կազակը, հա:

—Սև Անդրէյ:

—Հա, Սև Անդրէյ: Հէնց այդպէս էլ կը հարցնենք՝ որտեղ է լինում Սև Անդրէյը: Ահա մէկը գալիս է դէպի մեզ... հէնց նրան հարցնենք: Այո, լաւ ժողովուրդ է, կուշտ: Բոլորն էլ ցորեն հաց են ուտում: Բարի աջողում, ախպէր:

Կազակը բոլորովին մօտեցաւ նրանց և ծանր-ծանր պատասխանեց պապի ողջոյնին.

—Բարի աջողում:

Ապա ոտները լայն բաց արած, խոշոր, ոչ-արտայայտիչ աչքերը մուրացիկներին յառած նա սկսեց լուռ ու մունջ գլուխը քորել:

Լենկան քննող հայեացքով նայում էր նրան. պապը հարցականօրէն բաց ու խուփ էր անում ծերունական աչքերը. կազակը շարունակ լուռ էր, վերջապէս լեզուն հանեց և սկսեց նրանով բռնել բեխի ծայրը: Այդ գործողութիւնը յաջողութեամբ վերջացնելուց յետոյ բեխը քաշեց դէպի բերանը, ծամեց, նորից բերանից դուրս հանեց լեզուով և վերջապէս ընկհատեց արդէն ձանձրալի դարձած լուռութիւնը, ծուլօրէն խօսելով:

—Դէ, գնանք ատեան:

—Ինչո՞ւ, վեր թռաւ պապը:

Լենկայի ներսը դող ընկաւ:

—Պէտք է... Հրամայուած է: Դէհ:

Նա մէջքը դէպի նրանց դարձրեց և էն է գնում էր, բայց յետ նայելով և տեսնելով որ երկուսն էլ տեղից չեն շարժուում, նորից և այժմ արդէն բարկացած կանչեց.

—Դեռ կանգնած էք:

Այդ ժամանակ պապը և Լենկան ոտքի ելան և հետևեցին նրան:

Լենկան երկար նայում էր պապին և տեսնելով որ նրա չրթուքն ու գլուխը ցնցւում են և երկչոտութեամբ չորս կողմը նայելով արագ պտրտում է կռնատակը, զգաց, որ պապը դարձեալ շարութիւն է արել, ինչպէս առաջ ճամանում:

Նրա սիրտը ահ ընկաւ և ուրբուեց, երբ Տամանում պատահածը յիշեց: Այնտեղ պապը մի բակից սպիտակեղէն էր թռցրել և բռնուել: Ծիծաղում էին, հայայում, մինչև իսկ ծեծում. վերջապէս գիւերը ստանիցայից դուրս քշեցին: Գիւերը այնպէս մուլթն էր... Նրանք մնացին ծովախորշի ափին մի աւազուտ տեղ և ծովը ամբողջ գիւերը սոսկալի կերպով ոռնում էր: Աւազը վերահաս ալիքներից տեղահան լինելով ճարճատուտ էր: Իսկ պապը ամբողջ գիւերը հեծեծում էր և շնջալով աղօթում Աստուծուն, իրեն գող անուանելով և ներումն հայցելով:

— Լենկա...

Լենկան կողի վրայ կրած հարուածից վեր թռաւ և նայեց պապին, որի դէմքը ձգուել, երկարացել էր, չորացել ու մոխրագոյն դարձել և ամբողջովին դողդողում էր:

Կազակը հինգ քայլ առաջից էր գնում, չիբուխ էր ծըխում, փայտի հարուածներով կտրատում կռատուկների գլխիկները և բոլորովին յետ չէր նայում:

— Հրէս, ան, դէն չպուտիր... բանջարոտի մէջ... և նկատիր թէ որտեղ ես ձգում... որպէս զի յետոյ կարելի...— հազիւ լսելի ձայնով շնջաց պապը և գնալու միջոցին սերտօրէն թուռանը սեղմուելով, նրա ձեռքի մէջ խոթեց ինչ որ փալատի կտոր կոլուած՝ գնդակի նման:

Դողալով երկկողից, որը միանգամայն սառցրել էր նրա ամբողջ գոյութիւնը, Լենկան մի կողմ քաշուեց և ցանկապատին մօտեցաւ, ուր խիտ բանջարոտ էր: Լարուած նայելով օստիկան կազակի լայն թիկունքին, նա մեկնեց ձեռքը և ափի մէջ նայելով շորը բանջարոտի մէջ ձգեց. ձգեց և մնաց զարմացած:

Վայր ընկնելիս այդ շորը բացուեց և Լենկայի աչքին ընկաւ ծաղկաւոր երկնագոյն աղլուխը, որ վայկենապէս ծածկուեց փռքրիկ լացող աղջկայ պատկերով: Կենդանի կերպով նրա առաջ կանգնած՝ աղջիկը ծածկում էր և՛ կազակին, և՛ պապին և՛ ամբողջ շրջակայքը...: Նրա լացի հնչիւնները նորից խլացրին Լենկայի ականջները և նրան թուաց, որ իւր գիմաց գետին են գորբում աղջկայ արցունքների լուսաւոր կաթիլները ծածկելով նրանից ամբողջ աշխարհը և լցնելով նրա կուրծքը թախծալից ցրտութեամբ...

Այդ գրեթէ անփոխարինելի դրութեան մէջ նա միշտ պա-

պի ետևից գալով ատեան հասաւ Նա մի խուլ թնդիւն էր խում, որ չէր կարողանում և չէր կամենում որոշել. կարծես մշուշի միջով տեսնում էր, թէ ինչպէս քսակից մեծ սեղանի վրայ են թափւում հացի կտորտանքը խուլ ու փափուկ սեղանին թրխկալով... Ապա նրանց վրայ էին հաւաքւում հետաքրքիր գիւլիսներ բարձր գլխարկներով. թէ գիւլիսները և թէ գլխարկները խոփոռ, մթազնած տեսք ունին և չըջապատող մշուշի մէջ օրօրուելով ինչ որ սոոկալի բանով սպառնում էին... Յետոյ պապը խռպոտ ձայնով յանկարծ մի բան փրնթփնթալով երկու զօրեղ տղամարդկանց մէկի ձեռքից միւսի ձեռքն էր նետւում ինչպէս գայլի ճուռ:

— Իզուր է, ուղղափառ քրիստոնեաներ... անմեղ եմ, Տէրը վկայ— խոր թափանցող ձայնով վնգվնգաց պապը:

Լենկան լաց լինելով յատակի վրայ փռուեցաւ:

Այդ ժամանակ նրան էլ մօտեցան Բարձրացնելով դրին յատակի վրայ և պարտեցին նրա փոքրիկ իրանը ծածկող բոլոր ցնցոտիները: Ապա յանկարծ ամեն ինչ կանգ առաւ:

Լենկայի կոկորդում հաւաքուած արտասուքները կարծես մի եռուն զնդակ էին կազմել, որ դժուարացնում էր նրա շնչառութիւնը: Պապի անհասկանալի մորմոքը վերջացաւ և ձայների խռովայոյդ աղմուկը մէկ անգամից ընդհատուեցաւ, կարծես մէկը մի անգամից ամեն ինչ դուրս նետեց սենեակից:

— Ստում է Իսնիլովնան, չարի ծնունդը, քրթմնջաց մէկը. կարծես իւր թանձր ու յուզուած ձայնով խլացնելով Լենկայի ականջները:

— Բայց դուցէ թագցրել են մի տեղ— իբրև պատասխան աղաղակեցին աւելի բարձրաձայն:

Նւ նորից աղմկուեցան թանձր բասային ձայներ:

Լենկային թւում էր, որ այդ բոլոր ձայները խփում են նրա գլխին և նա այնպէս ցաւ զգաց, որ կորցրեց գիտակցութիւնը, կարծես անյատակ յօրանջիւնով նրա առաջ բացուած սև փոսի մէջ գլորուելով յանկարծակի:

Իսկ երբ ուշքի եկաւ, զգաց, որ գլուխը պապի ծնկանն է և տեսաւ, որ պապի դէմքը ուղղակի խոնարհուած է իւր դէմքին, պապի այդ դէմքը երբէք այնքան խղճալի և կնճռոտ չէր եղել, ինչպէս այժմ: Նրա երկչոտութեամբ բաց ու խուփ անող աչքերից փոքրիկ, սղոտոր արցունքներ էին գլորւում Լենկայի

Ճակատի վրայ և խողեսնում այտերը, պարանոցի վրայ թաւալուելով:

— Սթափուեցա՛ր, բալաս: Գնանք այստեղից, գնանք. առնի՞ծեալները բաց թողին:

Լենկան վեր կացաւ պապի ծնկներից և նստեց նրա կողքին. նա զգում էր, որ գլուխը ծանրաբեռնուած է մի դժուարին բանով և ահա այս ըովէին չէ միւս ըովէին վայր կընկնի ոււերից: Նա ձեռքերով գլուխը բռնեց և կամացուկ հեծեծաւով սկսեց ճօճել մի կողմից դէպի միւսը:

— Յաւում է գլուխդ, բալաս: Տանջեցին մեզ... գազաններ: Դաշոյնը կորել է, տեսնո՞ւմ ես. աղջիկն էլ աղլուխն է կորցրել և դրա համար գլխներին ես հաւաքուել: Մենք աղքատ ենք, նշանակում է և գող ենք... Ախ, Աստուած իմ, ինչո՞ւ ես պատաժում...

Պապի ճոճումն ձայնը կարծես ճանկոտում էր Լենկային. նա զգում էր, թէ ինչպէս իւր ներսում այնպիսի մի սուր կայծ է վառւում, որ նրան հարկադրում է հեռու կենալ պապից:

Նա տեղից շարժուեց և յօնքերը կիտած նայեց պապի գէմքին, որի կնճիւռներից, թոււմ էր նրան, փոքրիկ, հարամ, խաբեբայ օձաճտեր են նայում դէպի Լենկան: Նա սարսափեց և շուրջը նայեց:

Նրանք երկուսով նստած էին ստանիցայից դուրս տաճարի ճանապարհի ծայրին կուչ եկած՝ բարդենու խիտ ստուերում: Գիշերն արդէն վրայ էր հասել. լուսինը դուրս էր եկել և իւր կաթն-արծաթեայ լուսով ողողելով լայն ու հարթ տափաստանը, մի տեսակ հուպ էր ածել նրան և աւելի դատարկ ու աւելի տխուր տեսք տուել: Հեռւում երկնքի հետ միախառնուած տափաստանից վեր էին բարձրանում շուշանանան ամպեր և հանդարտ լողում էին վարագուրելով լուսինը և երկրի վրայ թանձր ստուերներ ձգելով: Ստուերները սերտ կպչում էին երկրին, դանդաղ, մտախոհ սահում նրա վրայից և յանկարծ կորչում, կարծես արեգակի կիզիչ հարուածների տակ յառաջացած երկրի ճեղքուածների ներսը մտնելով: Ստանիցայից ձայներ էին հասնում և այստեղ ու այնտեղ կրակներ պլպլում: Վարծես երկնքի պայծառ, ոսկեգոյն աստղերին փոխադարձաբար աչքով անելով:

— Գնանք, սիրունս, պէտք է գնալ, ասաց պապը:

— Փոքր էլ նստե՛ք—կամացուկ արտասանեց Լենկան:

Նրան դիւր էր գալիս տափաստանը: Յերեկը ճանապարհ կտրելով այդ տափաստաններում, նա սիրում էր առաջ նայել, այնտեղ, ուր երկնակամարը կարծես յենում էր տափաստանի լայն կրծքին: Եւ այդտեղ նրան ներկայանում էին մեծ, հրաշալի քաղաքներ, չտեսնուած բարի մարդկանցով, որոնցից հարկ չկայ հաց խնդրել առանց աղերսանքի էլ նրանք ինքնաբերաբար կը տան... Եւ երբ նրանց առաջ այդպէս լայն փռուած տափաստանը նրա դէմն էր հանում յանկարծ այդ արդէն ծանօթ ստանիցան իւր շինութիւններով ու բնակիչներով, նման այն բոլորին, որ տեսել էր շատ առաջ, միշտն ու նեղութիւնը պաշարում էին նրան այդ ցնորքների համար:

Բայց տափաստանը միւս օրը նորից բացուած էր նրա առաջ լայն ու արձակ և նորից ստիպում նրան պատկերացնել անտեսանելի քաղաքներ, այնտեղ հեռաստանում, մի ծայրում ծածկուած քաղաքներ...

Այժմ նա մտախոհ նայում էր դէպի հեռուն, որտեղից դանդաղ՝ ամպեր էին դուրս սողում: Այդ ամպերը նրան թւում էին իբրեւ անտեսանելի քաղաքի հազարաւոր երդիկներից բարձրացած ծխեր, որ այնպէս ցանկալի էր նրան տեսնել: Նրա այդ մտորմունքը ընդհատեց պապի խուլ հազը:

Լեւկան երկար դիտում էր այդ միջոցին ափահաբար օդ կլանող պապի արտասուաթոր դէմքը:

Լուսնի լուսով ողողուած է գլխարկի ցնցոտիներից, յօնքերից և միրուքից նրա վրայ ընկած տարօրինակ ստուերների տակ այդ դէմքը՝ ջղաձգաբար ցնցուող բերանով և լայն բացած ու ինչ որ թագուն հրճուանքով փայլատակող աչքերով և՛ սարսափելի էր և՛ ողորմելի և Լեւկայի մէջ այնպիսի մի նոր զգացմունք էր յարուցանում, որ ստիպում էր նրան աւելի և աւելի հեռու շարժուել պապից...

— Դէ նստենք, նստենք— քրթմջաց նա յիմարաբար ժրպտալով և պտրոցք արաւ բազուկի տակ:

Լեւկան երեսը դարձրեց և կրկին սկսեց դէպի հեռուն նայել:

— Լեւկա, Լեւոյկա, հապա դէսը նայիր...— յանկարծակի գոչեց պապը ցնծագին և բոլորովին խրխուլով խեղդիչ հագից, դէպի թորը մեկնեց մի երկար, փայլուն բան:— Արծաթապատ, արծաթ է նա... յիսուն արժէ, չնչաց նա:

Նրա ձեռքերն ու շրթունքը դողդողում էին ցաւից և ազահուլթիւնից ու ամբողջ դէմքը կծկւում էր:

Լենկան սոսկաց և հեռացրեց պապի ձեռքը...

— Թագադրու շուտով... ար պապի, թագցրու... աղաչելով չնջաց նա չորս կողմը նայելով:

— Հա, ինչ է, ծո՛ւռ. վախենում ես, բալաս... պատուհանից ներս նայեցի, տեսայ կախ տուած և հըմի, վերցրի ու փելիս տակը կոխեցի, ապա թփերի տակ թագցրի: Գալիս էինք ստանիցայից, իբրև թէ գլխարկս վայր է ընկել—կռացայ և վերցրի: Յիմար մարդիկ են... Աղլուխն էլ վերցրել եմ, հրէս...

Եւ ցնցոտիների միջից դողդողուն ձեռքով աղլուխը դուրս հանելով, պապը սրեց նրանով երեսը Լենկայի աչքի առաջ:

Լենկայի աչքի առաջ կարծես մի վարագոյր պատուհանից և հետևեալ պատկերը ներկայացաւ. նա և պապը որքան կարելի է արագ գնում են ստանիցայի փողոցն ի վեր, խուսափելով հանդիպող մարդկանց հայեացքից, գնում են ահաբեկուած, և Լենկային թւում է, թէ ամեն մի սիրտը ուզող իրաւունք ունի ծնծելու նրանց երկուսին, թքելու նրանց վրայ, հայհոյելու... Բոլոր շրջակայքը՝ ցանկապատները, տները, ծառերը պատած են ինչ որ տարօրինակ մշուշով, օրօրում են քամուց և ինչ որ սոսկալի, բարկացած ձայներ աղմկում են այնտեղ... Այդ ծանր ճանապարհը անվերջ երկար է և ստանիցայի ելքը չի երևում խարխուլ տների խտուլթեան միջից, տների, որոնք մերթ դէպի նրանց են շարժւում, կարծես կամենալով նրանց իրենց տակն առնել և մերթ հեռանում են մի այլ տեղ, իրենց պատուհանների մոլթ բծերի միջից ծիծաղելով նրանց դէմքին: Եւ յանկարծ մի պատուհանից մի սուր ձայն է լսւում. «Գողեր, գողեր, գող, փոքրիկ գող...»: Լենկան ծածուկ հայեացք է նետում դէպի այն կողմը և տեսնում է պատուհանի առաջ փոքրիկ աղջկան, որին փոքր ինչ առաջ տեսել էր լաց լինելիս և կամեցել էր պաշտպան կանգնել նրան: Նրա հայեացքը պատահեց աղջկայ հայեացքին. սա լեզուն հանեց և ցոյց տուեց Լենկային. կապոյտ աչքերը չարութեամբ փայլում էին և ծակծկում Լենկային ինչպէս ասեղներ:

Այդ պատկերը արթնացաւ երեխայի յիշողութեան մէջ և մի ակնթարթում անյայտացաւ, մի չար ժպիտ թողնելով մանկան դէմքին, ուղղուած դէպի պապը: Պապը անդադար խօսում էր, խօսում, երբեմն հազալուց կանգ առնելով. չարժում

էր ձեռքերը, ուրախ ժպտում էր, չփում էր գլուխը և դէմքի խորշոմների մէջ խոշոր կաթիլներով երևացած քրտինքը:

Ծանր, պատառուտուն և խորշոմած ամպը ծածկել էր լուսինը և լեռնալան գրեթէ չէր տեսնում պապի դէմքը... Բայց նա պապի կողքին երևակայում էր լացող աղջկան պատկերացնելով նրա կերպարանքը, և կարծես մտքում չափում էր երկուսին էլ: Տկար, ճռուղ, ազահ և պատառուտուն պապը, նրանից վիրաւորանք կրած, լացող, բայց առողջ, Թարմ ու գեղեցիկ աղջկայ կողքին նրան անպէտք և ճիշտ այնպէս չար ու դատարկ էր երևում, ինչպէս պատմեաւորի Կոչչէյը: Ի՞նչպէս կարելի է, ինչո՞ւ պապը վիրաւորանք հասցրեց աղջկան: Զէ որ նա նրան հարազատ չէ:

— Գոնէ եթէ հարիւր ռուբլի... հաւաքած լինէի... այն ժամանակ հանգիստ կը մեռնէի...

— Ի՛հ... յանկարծակի մի բան բռնկուեց լեռնայի մէջ.— Գոնէ լռիւ: Կը մեռնէի, կը մեռնէի... բայց տես որ չես մեռնում... Գողութիւն ես անում...— վնգւնգում էր լեռնալան և յանկարծ ամբողջովին դողդողալով ոտքի կանգնեց:— Դու գող քեօփակ... Ու— ու— և փոքրիկ, չոր բռունցքը սեղմելով նա սպառնաց անսպասելի կերպով լռած պապի քթի տակ և նորից ծանր ծանր ցած իջաւ, շարունակելով իրար սեղմած տատմաների արանքով.— Գողացաւ երեսայից... է լաւ... ոտքիդ մէկը գերեզմանում, իսկ այնտեղ... միւս աշխարհում դրա համար քեզ թողութիւն չի լինիլ:

Յանկարծ ամբողջ տափաստանը օրօրուեցաւ և ընդգրկուած կապտագոյն կուրացուցիչ լոյսով, ընդլայնուեցաւ... Տիրող խաւարը շարժուեցաւ և մի ակնթարթում անյայտացաւ: Թնդաց որոտի հարուածը և գռգռալով գլորուեց տափաստանի գլխով, իրար տալով և տափաստանը և երկինքը, որի երեսով արագ թռչում էր սև ամպերի թանձր խումբը իւր մէջ խեղդելով լուսնեակին:

Մթնեց: Հեռու մի տեղում էլ լուռ, բայց հանդարտ փայլատակեց կայծակը և մի վայրկեանից յետոյ նորից թոյլ որոտաց: Յետոյ խաղաղութիւն տիրեց, որին, Թուում էր, վախճան չէր լինելու:

Լեռնալան խաչակնքեց: Պապը նստած էր անշարժ, լուռ, կարծես մէջքով յենուելով ծառի բնին, պատուաւորուել նրա վրան:

—Պապի...— չնչաց Լենկան, տանջալից երկիւղի մէջ սպասելով որոտի նոր հարուածին: Գնանք ստանիցա:

Երկինքը նորից երերուեցաւ և նորից բռնկուելով կապտագոյն բոցով, երկրին մի ուժգին, մետաղեայ հարուած հասցրեց: Կարծես երկաթեայ հազարաւոր թերթեր փռուեցան երկրի երեսին մէկը միւսին հարուածելով:

—Ի՛նչ է, բալաս... վախենում ես, հմ... ասաց պապը խռպոտ ձայնով, տեղից չշարժուելով:

Նրա խօսքերը թախիծ, ցաւ ու ծաղր էին արտայայտում: Լենկային թուաց, թէ այդ խօսքերը օտարից է լսում:

Անձրևի խոշոր կաթիլներ սկսան տեղալ և նրանց չլուկը այնպէս խորհրդաւոր էր հնչում, կարծես նախազգուշացնում էր մի գալիք բանի համար: Հեռւում այդ չլուկը արդէն մեծացել, միապաղաղ մեծ հնչիւն էր դարձել, նման ահագին խոզանակով չոր գետինը չիփուց յառաջացած հնչիւնին, իսկ այստեղ, պապի և թոռան մօտ, իւրաքանչիւր կաթիլ գետնին ընկնելով կարճ և բեկ-բեկ էր հնչում և հանգչում առանց արձագանքի: Որոտի հարուածներ աւելի և աւելի մօտկից էին լսում և երկինքը աւելի յաճախ էր բոցավառում:

—Ստանիցա չեմ գնալ. թող ինձ՝ քեօփակիս ու գողիս... այստեղ անձրևը հեղեղէ և կայծակը սպանէ...— շնչասպառ խօսեց պապը:— Չեմ գնալ... գնա մենակ... Հրէն ստանիցան... գնա... Սա չեմ ցանկանում որ այստեղ նստես... կորիր... գնա, գնա... գնա...

Պապը այս անգամ արդէն գոռում էր խուլ ու խռպոտ ձայնով:

—Պապի... ներիր... մօտ գալով աղաչեց Լենկան:

—Ա... չեմ գնալ... չեմ ներիլ... Եթէր տարի ծնկներիս վրայ պահել եմ... բոլորը քեզ համար, ապրելս էլ... քեզ համար է եղել: Իբրև թէ շատ հարկաւորս է... Ախր ես մեռնում եմ... մեռնում... իսկ դու ասում ես—գող... Ո՛ւմ համար եմ գողացել... քեզ համար... ախր քեզ համար է այդ բոլորը: Հրէս, վեր առ, առ... քո կեանքի... բոլորը կեանքիդ համար եմ ժողովել թէկուզ հէնց գողացել... Աստուած տեսնում է բոլորը... նա գիտէ... որ գողացել եմ... դիտէ... նա կը պատժէ ինձ. նա-ա չի ներիլ ինձ՝ քեօփակիս... գողութեան համար: Եւ պատժել էլ է... Տէր, Դու պատժեցիր ինձ... հմ, պատժեցիր... Երեխայի ձեռքով սպանեցիր ինձ... Արդար է, Տէր... օրինաւոր է... կա-

տարեալ ես Դու, Տէր... Քո դատաստանին եմ գալիս... Ուղարկիր հոգիս առնելու։ Օխ, պրծաւ... զնաց...

Պապի ձայնը սուր ճլի այն աստիճանին հասաւ, որ Լենկայի սիրտը սառն սարսափով պաշարեց։

Որտեղ հարուածները երեւ տալով տափաստանն և երկինքը այժմ այնպէս հնչուն ու փութկոտ էին զոգուում, որ կարծես նրանցից իւրաքանչիւրը կամենում էր երկրին նրա համար մի անհրաժեշտ կարևոր բան ասել. իսկ բոլորը միասին իրար առաջ կտրելով ոռնում էին գրեթէ առանց ընդհատումների։ Կայծակնապատառ երկինքը դողդողում էր. դողդողում էր և տափաստանը, մերթ վառուելով ինչպէս կապոյտ կրակ, մերթ ընկղմուելով ցուրտ, ծանր և անձուկ խաւարի մէջ, որը տարօրինակ կերպով կուչ էր ածել այդ տափաստանը։ Կայծակը երբեմն լուսաւորում էր հեռաստանը, որը, թւում էր, փութով խուսափում է աղմուկից և գոռում-գոչիւնից...

Տեղում էր անձրեւ և նրա կաթիլները. փայլելով կայծալի լոյսի տակ եղած պողպատի նման, ծածկում էին ստանիցայի ժպտադէմ մարմրող կրակները։

Լենկան մարում էր սարսափից, ցրտից և սարսափի մի անորոշ թախծալից զգացումից, որ ծնուել էր նրա մէջ պապի աղաղակից։ Լայն բաց արած աչքերը դէպի առաջ սևեռած, վախենալով թարթել մինչև իսկ այն ժամանակ, երբ ջրի կաթիլները թրջուած գլխից ցած հոսելով թափւում էին 'աչքերի մէջ, նա ականջ էր դնում պապի ձայնին, որ կորչում էր ուժգին հնչիւնների ծովում։

Լենկան զգում էր, որ պապը նստած է անշարժ, բայց թւում էր, որ նա գլուխ է վերցնելու զնայ մի տեղ և նրան մենակ է թողնելու։ Նա աննկատելի կերպով փոքր առ փոքր մօտենում էր պապին և երբ արմուկնով դիպաւ նրան, սարսուռ զգաց, ինչ որ սարսափելի բանի սպասելով...

Երկինքը պատռուեց և կայծակը լուսաւորեց երկուսին էլ՝ իրար կողքի կծկուած, փոքրիկ, ծառի ձիւղերից կաթկթող ջրի հոսանքներից թրջուած։

Պապը ձեռքով օդի մէջ մի շարժում արաւ. այժմ նա յոգնած ու չնչսպառ անդադար մորմոքում էր։

Երբ Լենկան նայեց նրա դէմքին, երկիւղից աղաղակեց... կայծակի կապտագոյն փայլի տակ այդ դէմքը մեռած էր թւում,

իսկ նրա փարվան տուող հանգած աչքերը խելակորոյս, մտա-
զուրկ էին:

— Գնանք, պապի... վնգվնգում էր նա գլուխը պապի
ծնկների մէջ խոթելով:

Պապը թեքուեց դէպի նա և գրկեց նրան բարակ ու ոսկե-
րոտ ձեռքերով, ամուր սեղմեց, և աւելի մօտ քաշելով յանկար-
ծակի գոռաց ուժեղ և սուր ձայնով ինչպէս թակարդ ընկած
գայլ:

Այդ գոռոցից հազիւ խելագարութեան չհասած Լենկան
դուրս պրծաւ նրա գրկից, ոտքի կանգնեց և նետի նման առաջ
սլացաւ կայծակից մթնած աչքերը լայն բաց արած, երբեմն
ընկնելով, երբեմն կանգնելով և շարունակ աւելի և աւելի դէ-
պի խաւարի խորքը գնալով, խաւար, որ մերթ աներևոյթա-
նում էր կայծակի կապտագոյն փայլից, մերթ նորից սերտ ընդ-
գրկում էր երկիւղից խելագարուած երեխային:

Որոտը ուժնում էր և կայծակները աւելի յաճախ և աւելի
հպարտօրէն փայլատակում էին: Իսկ տեղացող անձրիւր այնպէս
ցուրտ, միօրինակ և տաղտկալի կերպով չրմփում էր... և վեր-
ջապէս թւում էր, թէ տափաստանում բացի անձրևի աղմուկից
կայծակի փայտակումից և որոտի խռովայոյզ չափնդից երբեք
ոչինչ չէր եղել:

Միւս օրը առաւօտեան դէմ ստանիցայի երեխաները չըր-
ջակայքը պտտելիս իսկոյն առն և վերսդարձան և բոլորին ոտքի
կանգնեցրին՝ յայտնելով, որ սօսիների տակ տեսել են երեկուայ
մուրացկանին և որ նա պէտք է մորթուած լինի, որովհետև
կողքին մի դաշոյն կայ ընկած:

Բայց երբ տարիքաւոր կազակներ եկան նայելու և ստու-
գելու, այլ բան երևաց: Մերունին դեռ ևս կենդանի էր: Նրբ
մօտեցան, նա փորձեց բարձրանալ գետնից, բայց չկարողացաւ:
Ինչպէս երևում էր, նրա լեզուն բռնուել էր և արտասուածքոր
աչքերով նա բոլորին ինչ որ հարցնում էր և ինչ որ անդադար
որոնում ամբոխի մէջ, բայց ոչինչ չէր գտնում և ոչ մի պա-
տասխան ստանում:

Մրեկոյեան դէմ նա մեռաւ և թաղեցին այնտեղ, ուր
գտել էին—սօսենու տակ, ընդունելով, որ գերեզմանատանը
չի կարելի, որովհետև նախ՝ օտար է, երկրորդ՝ գող է, երրորդ՝

մեռել է առանց զղման: Նրա մօտ ցեխի մէջ գտան դաշոյնը
և աղլուխը:

Իսկ երկու թէ երեք օրից յետոյ գտնուեցաւ և Լենկան:

Ստանիցայից ոչ հեռու մի հեղեղատի գլխին սկսան ակ-
ռաւների երամներ պտոյտ գալ և երբ մարդիկ գնացին այն-
տեղ, գտան երեխային, որը երեսն ի վայր ընկած էր ձեռքերը
տարածած, անձրևից յետոյ հեղեղատում մնացած տիղմի մէջ:

Սկզբում վճռեցին թաղել նրան գերեզմանատանը, որով-
հետև նա դեռ ևս երեխայ էր, բայց փոքր ինչ մտածելուց յե-
տոյ թաղեցին պապի կողքին հէնց նոյն սօսու տակ: Այդտեղ
մի հողակոյտ կազմեցին և վրան մի անտաշ քարէ խաչ կանգ-
նեցին:

բարգմ. Ա. ԳԵԱՆՋԵՑԵԱՆ

